
ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԴԵՐԱՆՎԱՆԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԸ «ԵՐԵՄԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ» ԳՐՔՈՒՄ

ՂՈՒԿԱՍՅԱՆ Ս. Վ.

Աստվածաշնչի «Երեմիայի մարգարեություն» գիրքը բաղկացած է 52 գլուխներից, որտեղ աշխարհաբարյան հարցումներին գրաբար տարբերակում համապատասխանում են հաղորդակցական տարբեր տիպեր: Այստեղ հարցական նախադասությունները մենք ուսումնասիրել ենք ըստ արևելահայերեն Աստվածաշնչի օրինակների, սակայն զուգահեռաբար տալիս ենք նաև գրաբար տարբերակները, որպեսզի գաղափար կազմենք, թե ինչ տեսք ունեն դրանք հին հայերենում: Ժամանակակից գրական արևելահայերենի հարցումները քաղված են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի՝ 1994 թ. հրատարակած Աստվածաշնչից, իսկ գրաբարյանը՝ Հայաստանի աստվածաշնչային ընկերության՝ 1997 թ. հրատարակությունից:

Սույն գրքի աշխարհաբար տարբերակում կա 146 հարցական նախադասություն, իսկ գրաբարյանում՝ 145: Միշտ չէ, որ աշխարհաբար տարբերակի հարցման դիմաց գրաբարյանում կա ունենք հարցում. կան նաև տարբերություններ: Այսպես, աշխարհաբարի յոթ հարցման դեպքում գրաբարում ունենք պատմողական նախադասություն, և գրաբարի յոթ հարցման դեպքում աշխարհաբարում ունենք պատմողական նախադասություն: Ասենք նաև, որ աշխարհաբարի երկու հարցման դիմաց գրաբարում ունենք բացականչական նախադասություն և գրաբարի մեկ հարցման դիմաց աշխարհաբարում՝ բացականչական նախադասություն: Ստացվում է, որ գրաբարի հարցումների քանակը, աշխարհաբարի հետ համեմատած, մեկով պակաս է:

«Երեմիայի մարգարեությունում» կան միաբնեռ, այսինքն՝ մեկ հարցումից բաղկացած, երկբնեռ և եռաբնեռ, այն է՝ երկու և երեք հարցումներից բաղկացած հարցական նախադասություններ: Այստեղ բոլորից շատ հանդիպում են միաբնեռ ինչու-որ հարցումները՝ 66 հատ, եթե հաշվի առնենք, որ ինչու-որ հարցումները հանդես են գալիս բարդ-հարցական մյուս նախադասությունների հետ էլ, ապա այդ թիվը ավելի կշատանա:

Այս գրքում միաբնեռ ինչու-որ հարցումների մեջ օգտագործված են հետևյալ հարցական դերանունները՝ ինչո՞ւ, ի՞նչ, ո՞վ, ո՞ւր, ե՞րբ, ինչպե՞ս, ինչի՞ համար և որի՞ համար: Այս անգամ էլ ինչու-որ միաբնեռ հարցումների մեջ բոլորից շատ գործածված են ինչո՞ւ, ի՞նչ և ո՞վ հարցական դերանուններով նախադասությունները, մյուսները հանդիպում են համեմատաբար քիչ քանակությամբ: Բերենք այս հարցումների համապատասխան օրինակները:

«Ինչո՞ւ»-ով հարցումներ: Այս դերանունով նշված մարգարէությունում կա 21 հարցում: Աշխարհաբարյան այս դերանվանը գրաբարում համապատասխանում են ընդէ՛ր, զիա՛րդ և զի բառերը, ինչպէս՝ Ես քեզ տնկեցի իբրեւ համակ ազնիւ եւ պտղաբեր որթնատունկ. ինչո՞ւ ինձ համար դառնութեան փոխուեցիր, ո՛վ դու, որթնատունկդ օտարացեալ - Եւ ես տնկեցի զքեզ որթ պտղաբեր ամենեւին ճշմարիտ. զիա՛րդ դարձար ինձ ի դառնութիւն, որթդ օտարացեալ (Երեմ., 2:21)¹: Այժմ ինչո՞ւ էք խօսում ինձ հետ, որովհետեւ դուք բոլորդ ամպարշտացաք, բոլորդ անօրէն եղաք իմ դէմ,- ասում է Տէրը - Արդ ընդէ՛ր խօսիք ընդ իս. զի ամենեքեան դուք ամպարշտեցաք, եւ՝ ամենեքեան դուք անօրինացալք յիս, ասէ Տէր (2:29):

Սեղեկիան պիտի մտնի Բաբելոն եւ պիտի նստի այնտեղ, մինչեւ որ այցելութեան գամ իրեն,- ասում է Տէրը,- ինչո՞ւ էք մարտնչում քաղղէացիների դէմ, որից ոչ մի յաջողութիւն չէք ունենալու - Եւ ի Բաբելոն մտցէ Սեղեկիա. եւ անդ նստցի մինչեւ այդ արարից դմա, ասէ Տէր. զի՞ մարտընչիք ընդ Քաղղէացիսն ուստի ոչինչ յաջողիցիք (32:5):

«Ի՞նչ»-ով հարցումներ: Սույն դերանունով «Երեմիայի մարգարէութիւնում» կա 17 հարցական նախադասություն: Աշխարհաբարյան Ի՞նչ դերանվանը գրաբարում դարձյալ համապատասխանում է Ի՞նչ բառը: Օրինակ՝ Տէրը, խօսքն ինձ ուղղելով, ասաց. «Ի՞նչ ես տեսնում, Երեմիա » - Եւ եղեւ բան Տեառն առ իս եւ ասէ, Զի՞նչ տեսանես, Երեմիա (1:11): Յորենի մօտ ի՞նչ է յարդը,- ասում է Տէրը - Զի՞նչ է յարդ առ ցորենեաւ, ասէ Տէր (23:28):

«Ո՞վ»-ով սույն մարգարէությունում կա 9 հարցական նախադասություն: Այս դերանունը գրաբարում հանդիպում է ո՞ (2:24) և Ո՞վ (17:9, 18:13, 23:18) ձևերով. նշենք, որ ո՞վ-ը գրաբարյան տարբերակում հանդիպում է ավելի շատ: Բերենք օրինակներ՝ Ո՞վ կը տար իմ գլխին ջուր եւ իմ աչքերին՝ արտասուքի աղբիւրներ, որ ես զօր ու զիշեր ողբայի այս ժողովրդին եւ իմ ժողովրդի դստեր վիրաւորներին - Ո՛ւ տայր զգլուխ իմ ջուր, եւ զաչս իմ աղբերս արտասուաց. եւ լայի զվողովորդ գայս՝ գտիւ եւ զգիշեր եւ զվիրաւորեալս դստեր ժողովրդեան իմոյ (9:1): Միտը խոր է, քան ամէն բան. մարդ արարած է. ո՞վ կարող է ճանաչել նրան - Խորին է սիրտ քան զամենայն, եւ մարդ է, եւ ո՞վ ծանիցէ զնա (17:9): Բսկ ո՞վ հաւատարիմ մնաց Տիրոջ խորհրդին եւ անսաց ու հետեւեց նրա խօսքին - Զի ո՞վ եկաց ի հաստատութեան Տեառն, եւ ետես եւ լուաւ զբան նորա (23:18):

«Ո՞ր»-ով այս գրքում կա 7 նախադասություն: Նշված դե-րանունը գրաբարում հանդիպում է ո՞ր և յո՞վ (15:2) ձևերով: Յո՞վ-ով կա միայն մեկ դեպք: Բերենք օրինակներ. Եւ քահանաները չհարցրին՝ «Ո՞ր է Տէրը» - Եւ քահանայքն ոչ ասացին՝ Ո՞ր է Տէր (2:8): Հապա ո՞ր են քո այն աստուածները, որոնց քեզ համար կերտեցիր. քո թշուառութեան ժամանակ նրանք թող ելնեն ու փրկեն քեզ - Եւ ո՞ր են աստուածքն քո գոր արարեր քեզ. յարիցեն եւ փրկեսցեն՝ զքեզ ի ժամանակի չարեաց քոց (2:28): Եւ եթէ

¹ Այդուհետեւ կնշվեն միայն մեջբերումների համարները:

պատահի, որ հարցնենք՝ ո՞ր գնանք, կ'ասես նրանց. այսպես է ասում Տէրը. «Ովքեր մահուան համար են՝ թող գնան դէպի մահ, ովքեր սրի համար են՝ դէպի սուր, ովքեր սովի համար են՝ դէպի սով, իսկ ովքեր գերութեան համար են՝ դէպի գերութիւն» - Եւ եղիցի եթէ ասիցենք քեզ, Յո՞ւլ էլցուք, ասասցես ցնոսա, Այսպէս ասէ Տէր. Որք ի մահ՝ ի մահ, եւ որք ի սուր՝ ի սուր, եւ որք ի սով՝ ի սով, եւ որք ի գերութիւն՝ ի գերութիւն (15:2):

Ե՞րբ - ով այս մարգարէությունում կա 5 հարցական նախադասություն: Այս հարցումները և՛ աշխարհաբարում, և՛ գրաբարում կազմվում են «ե՞րբ» դերանվան միջոցով, ինչպես օրինակ՝ Երուսաղէմ լուա՞ քո սրտի չարութիւնները, որ փրկուես. քո ցաւալի խորհուրդները մինչեւ ե՞րբ պիտի մնան քո մէջ - Լուա ի չարեաց զսիրտ քո, Երուսաղէմ, զի ապրեցիս. մինչեւ ցե՞րբ գտանիցին ի քեզ խորհուրդք ցաւոց քոց (4:14): Մինչեւ ե՞րբ ես այդպէս մնալու՝ Մինչեւ ցե՞րբ իցե՞ք քեզ այդ (13:27):

«Բնչպէս»-ով ևս կա 5 հարցական նախադասություն: Աշխարհաբարյան ինչպէ՞ս դերանվանը գրաբարում համապատասխանում են զիա՞րդ և զի՞ բառերը, օրինակ. Դրա համար էլ այսպէս է ասում Աստուած՝ Զօրութիւնների Տէրը. «Ահաւասիկ ես կրակով պիտի հալեմ նրանց եւ պիտի փորձեմ նրանց, որովհետեւ չարութիւնների պատճառով ուրիշ ինչպէ՞ս վարուեմ իմ ժողովրդի դստեր հետ» - Վասն այսօրիկ այսպէս ասէ Տէր զօրութեանց. Ահաւասիկ ես ջեռուցից գնոսա, եւ փորձեցից գնոսա. զի՞ արարից յերեսաց չարեաց՝ դստեր ժողովրդեան իմոյ (9:7): Քո ոտքերը վազում են, բայց քեզ պիտի լքեն, էլ ինչպէ՞ս մրցես ձիաւորների հետ - Ոտք քո ընթանան՝ եւ լքուցեն զքեզ. զիա՞րդ կազմիցիս երիվարօք (12:5): Ինչպէ՞ս է, որ նա չինայեց իմ քաղաքը, այն աւանը, որը ես սիրեցի - Եւ զիա՞րդ է, զի ոչ թողոյր զքաղաքն իմ, զաւանն զոր սիրեցի (49:25):

«Երեմիայի մարգարէութիւնում» ինչի՞ համար-ով կա 2 հարցա-կան նախադասություն և որի՞ համարով՝ մեկ: Աշխարհաբարյան ինչի՞ համարին՝ գրաբարում համապատասխանում է ընդէ՞ր բառը, իսկ որի՞ համարին՝ որո՞վք-ը: Բերենք այդ նախադասությունները. Ինչի՞ համար սրով, սովով ու մահով մեռնէք դուք եւ քո ժողովուրդը, ինչպէս այն ազգը, որը չի ուզի ծառայել Բաբելացիների արքային, և որի մասին խոսեց Տէրը - Եւ ընդէ՞ր մեռանիք, դու եւ ժողովուրդ քո, սրով եւ սովով եւ մահուամբ, որպէս եւ խօսեցաւ Տէր առ ազգ, որ ոչ ծառայիցէ արքային Բաբելացւոց (27:13): Սրանցից որի՞ համար հաշտվեմ քեզ հետ. քո որդիներն ինձ լքեցին եւ չաստուածներով երդուեցին. եւ կշտացրի նրանց, բայց նրանք շնացան ու պոռնկանոցներում օթեւանեցին: - Որո՞վք այստքիւք հաշտեցայք ընդ քեզ. որդիքն քո թողին զիս, եւ երդնուին ի չաստուածս. յագեցուցի գնոսա՝ եւ շնանային, եւ ի պոռնկանոցս օթեւանս առնէին (5:7):

МЕСТОИМЕННЫЕ ВОПРОСЫ В „КНИГЕ ПРОРОКА ИЕРЕМИИ“

ГУКАСЯН С. В.

Резюме

В “Книге Пророка Иеремии” на ашхарабаре насчитывается 146 вопросительных предложений, а на грабаре — 145. Это однополюсные, двухполюсные и трехполюсные вопросы-тельные предложения. Чаще всего встречаются однополюсные или местоименные вопросительные предложения — 66, в которых вопрос выражен следующими вопросительными местоимениями: **что, кто, куда, когда, как, почему, для чего**. По частотности употребления выделяются местоимения **почему, что, кто**.

PRONOMINAL QUESTIONS IN "THE PROPHECIES OF JEREMIAH"

S. GHUKASYAN

Abstract

In the modern Armenian version of "The Prophecies of Jeremiah", there are 146 interrogative sentences, whereas in Grabar, their number makes 145. The book comprises **yes-no** questions and modal interrogative sentences. Most frequent interrogative sentences are special questions formed through **what** and **who**.